

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ

Մեծ • Պ. Գ. Փրօֆֆ-Գալֆայեան  
Խմբագիր ճարտարապետական, երաժշտա-  
կամ ԿՌՈՒԽՆԿ չանդիսի. — ԹԱՐԻՋ

### Մեծ. Պարոն,

«Հայ ճարտարապետութեան» մասին գլ-  
րած յօրուած Ձեր «կոռուկ սին մէջ քար-  
մանուրեամ արտատպելոյ դիտումը՝ կը խր-  
րախոսու զի պատազ քննուրեանց մէջ ար-  
դարացներոյ Ձեր այն տողերը՝ զոր չափու-  
զանց բարեցակամ կը զոնեմ, կարող եք  
արտատուրեան ժամանակ յաւերածներ և  
փոխխոնմներ ընել, որ կրիմն հարկատը  
երեսի Ձեզ, իրեւ մասնագտի:

### ԿՈԶԱԿԸ (A B S I D E )

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՏ ՄԷՋ

Բեմը եկեղեցւոյն արեւելեան այն մասն  
է՝ որ զասէն վեր կը զոնուի և անկից  
քարձը, և ուր կը զորուի Աւագ խորանը:  
Մեր եկեղեցւոյն մէջ ամենէն յարգուած  
ու պատուաւոր տեղն է այն. հոն կը քար-  
ձրանան միայն պատարագիշ քահանան և  
սարկաւագունց և խորհրդոյն ծառայողը՝  
զգեստաւորուած:

Բեմին այն մասը՝ որ Աւագ-խորա-  
նին ետեւ կը զոնուի՝ կը կոչուի կողակ  
(abside), և որպէս զի կարենայ կողակ  
ըստով՝ պէտք որ այն եկեղեցւոյն մարմնէն  
զուրս ցցուած ըլլայ (կամ այնպէս երեւի)  
կիսարորդ ձեւով. և այնպէս էին ըրիս-  
Պոռնէութեան առաջին զարուց եկեղեցեաց,

1. Այսպէս էն ընդհանրապէս գոթական եկեղեցիներու  
կողակները, ինչպէս վենետիկ մէջ Այ Ֆրու և Տ.  
Giovanni և Paolo, ինչպէս անդադարուց ինձ ճար-  
տարապես Պ. Պետրոս Ռազզաւու. Ասկեան.

Հեթանոսական տաճարներու և հասարա-  
կաց շնչերու կողակները: Բայց Յուստի-  
նեան ժամանակէն ի վեր կողակը բազմ-  
անկիւն ձեւը կ'առնու՝, ըլլայ ութանկիւն  
կամ վեցանկիւն:

Բայց ինչպէս բախնք՝ կրնայ ըլլալ եր-  
բեմն որ կողակը եկեղեցւոյ մարմնէն դուրս  
չի ցցուիր, այնպէս որ արտացուստ ե-  
կեղեցւոյն արեւելեան ճակատը ուղղագիծ  
կ'ըլլայ և սակայն իր ներսը բոլորաձեւ  
կողակը կ'ունենայ, ինչպէս որ է Անիի  
Տիրամայր եկեղեցւոյն կողակը (Ձկ. 11), և  
ինչպէս որ էին Ա. Ռաքեալ եկեղեցւոյն  
չորս կողակները (Ձկ. 5): Բայց այս այն-  
քան հազուագիւտ է որ La Grande En-  
cyclopédieի աշխատակիցը L. Palustre,  
կողակի (ասես Abside) վրայ խօսելով կ'ը-  
գուէ. «Կողակները, ընդհանրապէս, ո՛քան  
ալ ըլլայ իրենց թիւը, (շէնքէն) զուրս ցը-  
ցուած կը շինէն: Մենք միայն երկու եկե-  
ղեցիներ զիտենք Ս. Մարիամ ի Գումե-  
տին (Cosmédin) և Փուազիէի մայր Ակե-  
ղեցին, որոնց կողակները որմին թանձուու-  
թեան մէջ շինուած են». այսպէս են մեր  
յիշած Անիի երկու եկեղեցիներու կողակ-  
ները (Ձկ. 5 և 11):

Հայկական եկեղեցիներու մէջ մասամբ  
մը ստէպ այս բացառիկ երեսոյթը տեղի  
կ'ունենայ, վասն զի ընդհանրապէս Աւագ  
խորանի կողակին կողմանակից՝ մէկ մէկ  
խորչը կ'ըլլան եկեղեցւոյ ուղղագծն  
զուրս ելած, որոնցմով մայր կողակին մե-  
ծամասնութիւնը կը կորսուի. այսպէս են  
օրինակի համար էջմիածնի կաթողիկէին  
(Ձկ. 2) և Անիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ  
եկեղեցւոյն կողակները:



Կան եկեղեցիներ, մանաւանդ Արեւմբ-  
տեալց քով, որոնք բնաւ կողակ չունին,  
կան ալ որոնք մէկ կամ երեք կողակ ու-  
նին, և որոնց մէջ միջինը միշտ մեծ է  
քան կողմանակից եղածները: Արեւմեալց  
քով երեք կողակի գոյութիւնը շէնքին ճար-  
տարապետին քամահանցիքին կը վերագրուի  
և ո՞չ թէ արարողական ստիպման. այդ  
պատճառու Հոռոմայ զիլսաւոր եկեղեցիներ-  
էն ոմանք մէկ կողակ միայն ունին, ինչ-

պէս լ. Մարիտմ Մաձձիսրէ, Ա. Թովհուն-  
նես Լատերանու, Ա. Պօղոս և Նախնական  
Ա. Գնարոս եկեղեցիները. և բնդհակառակն  
Ա. Եղիսէս, Ա. Մարիտմ և այժմու Ա. Պի-  
տրոսը երեք լուզակ ունին:

Երեք լուզակի ընդհանրացումը Արեւ-  
մուտքի մէջ՝ Արեւելեան եկեղեցիներէն առ-  
ողուցաւ, և Արեւելքի մէջ՝ բիւզանդական  
ճարտարապետութենէն. վասն զի բիւզան-  
դական (յունական) եկեղեցին թէեւ մէկ  
խորան ունէր՝ բայց անհրաժեշտ էր երեք

մէջ կ'ընդհանրանան արեւելեան մայր և  
կեղեցեաց մէջ<sup>1</sup>:

Հայերս ալ ոոյն դարուն կ'ընդունինք  
փոքր կողակները Աւագ խորանին երկու  
կողմը. և որոնք նոյն նապատակով առնուած  
են՝ ինչ որ բիւզանդական եկեղեցւոյն մէջ:  
ի սկզբան այդ փոքր որրարանները եկե-  
ղեցւոյ մասն կը կազմէին իրրեւ սարկաւա-  
գունց և իրրեւ խորան պահառոց և ոչ թէ  
իրրեւ տեղ պատարագի խորանի, վասն  
զի այդ հին դարերուն՝ օրը մէկ պատարագ



Զի 11. — Տիրամիսյր եկեղ. յԱմի 2.

Սըրարան (Sanctuaire) ունենալ, խորա-  
նը միջին սրբարանին մէջ կը զրուէր, և  
երկու կողմնակից եղած սրբարաններուն  
հարաւայինը՝ սարկաւագունց կը կոչուէր,  
իսկ հիսխայինը՝ Անդան պահառոց ուր կը  
զրուէին սկիճը, նշանաբը և պատարագի  
ժամուն՝ հանդիսական թափորով աւագ խո-  
րանը կը փոխազդուէին՝ սըրագործելու հա-  
մար:

Կողմնակի եղած այս փոքր սրբարան-  
ները միանգամայն լուզակներ կ'ունենային.  
և այս փոքր կողակները վեցերորդ դարուն

միայն կը մատուցուէր, եւս մեր եկեղե-  
ցաց մէջ, և այն՝ Աւագ խորանին վրայ<sup>2</sup>:  
Տիրորոյ եկեղեցին, որ հնագոյն ձեւով

\* Զիթ 1-10 Տես «Բազմավեպ» 1906, թիւ 11. մեց  
«Յառակածեւ հայ եկեղ.» յօդուածը: Ուուզն զի «Բազ-  
մավեպ» մին էջերը ծանօթ թիւշներով չեւցուին՝ անոր  
համար այն թեշները միայն պիտի դիմում՝ որոնց բա-  
ցարաւաթիւն մը պիտի լուսաբռնի:

1. Հմեմ. Ηστοινέ de l'Art. հո. Ա. էջ 148-9.

2. Այս մասին տես Հ. Վ. Հացունուս Ա. Պատարա-  
գի ոքերը.


մեզի հասած է՝ (24. 12) Աւագ խորանի երկու կողմը երկու ուղղագիծ խորշեր ունի, որոնց երկու սրբարաններ են: Աւագ խորանը ունի նաև բոլորածեւ կողակ, իսկ սրբարանները զուրկ են անկից: Այս երկողին ըստ Դէսիէի<sup>1</sup>, Հ. Ալիշանի<sup>2</sup> և Հ. Յ. Քաթըրճեանի<sup>3</sup> շմուռած է Եղ գարու մէջ. և այս կարծիքը հիմնած է այն արձանագրութեան վրայ՝ որ ցարդ կը զբանուի աւագ գրան բարաւորին վրայ. և որ է (ըստ Շիրակայ Հ. Ալիշանի) «... ուրանայ և Հոռու... (Ե)պիսկոպոսի և Ց... յունի Տիկորյ վանաց և երիցու և ՄԱՆԱԼԻ հազարափատի հիմնարկեցաւ տեղին ի ծեսն ՅՈՀԱՆՆԻ Հայոց կաթողիկոսի և Յոհանն Արշարունեաց յիւր բարիեաւութիւն և բոլոր ազգիս և ամուսնի և որդիկաց և սիրելեաց և սրբոյ ՊԱՄԿՈՒԻ. ԱՌԱՋԱՆ ԱԱԱՄԱՐԱԿԱՆ շինեաց զայս վկայարան՝»:

Իէսիէ եկեղեցւոյ շինութեան ժամանակը կը համարի Արարաց նախ քան ի Հայո արշաւելլը. և Հ. Ալիշան արձանագրութեան անուններէն կը հետեւենչ որ յիշուած կաթողիկոսն Յովհաննէս՝ Է ինչն Մանդակունին որ կ'ապրէք հինգերորդ դարու վերջերը:

Բայց Գեր. Յուսիկ եպիսկոպոս՝ Արարաց ամազգին մէջ՝ առաջարկեց արձանագրութեան մէջ յիշուած Յովին կաթողիկոսը զօնիան Բագրեւանդացին համարել որ եօնիներորդ գարուն սկիզբը իրբեւ հակամթու կաթողիկոս նստաւ կարնոյ մէջ: Եւ այն ատեն ըստ այնմ անձանօթ «Մահան» և «Մամակ» կարգաւոլ՝ «Ս. Ասրգիս որ պիտի համարինց Ասրգի Վանեակին «որ իրբեւ ապստամբ ձերքակաւուելով յոյն զօրավար Հերակլից՝ զիկատուեցեց իւր հարազատ վարագանչերսին հետ կարնոյ քաղաքում»: Ասէակ կամսարականն մնում է անյայտ:

1. *Tsvier Մամ Ա. LIII. էլ 120-1.*
2. *Հման. Հ. Ալիշանի Շերակ էլ 131-3.*
3. *Տես Պատրարքաթաւոյ Հ. Քաթըրճեանի էլ 725.*
4. *Շերակ էլ 182.*
5. *Արարաց էջմիածնի 1892, էլ 879.*

Մայր կողակ և փոքր կողակներ. — Երբ եկեղեցւոյ մը մայր կողակը կիսաբոլոր է կամ հաւկթածե՝ ան կրնաց մահնգամայն ուրիշ փոքր կիսաբոլոր խորշերէ կազմուի, ինչպէս են Ալէյմիք և Նուայնի (Նոյօն) մայր եկեղեցիներուն կողակները որոնք ունին հինգ համաձեւ և համաշափ կողակներ<sup>1</sup>, փոլյոնուայի (Colognoi) մայր կո-



Հետ 12. Եկեղեցի Տիկորյ:

գակը ունի եօթը, իսկ Վենետիկոյ Մ. Մարկոսի երեք կողակներն ալ ունին երեքական փոքր կիսաբոլոր կողակներ: Իսկ Անիի կաթողիկէն մայր կողակը ունի առաս կիսաբոլոր կողակածեւ խորշեր (տես Հետ 13):

Այն երկու սրբարանները որոնք Աւագ կողակին երկու կողմերը կը գտնուին՝ շատ ձեւերով հասած են մեզ, ընդհանրապէս

6. Ըստ Անրէս ժամանակակից պամազգրին. Հման. Գև. է.

7. Ինչպէս որ է, Կ'ըսէ Պ. Ասկեան, Վ. Հնետիկոյ Ա. Զարարիա եկեղեցին:


Ա. — Քառակուսի, ինչպէս Հռիփսիւմեանց եկեղեցւոյն մէջ (Ձև 1):

Բ. — Ուղղանկիւն բատ բայնարեան, ինչպէս Էջմիածնաց Կաթողիկէին և Տիկորոյ եկեղեցւոյն մէջ (Ձև 2. 12):

Գ. — Ուղղանկիւն բատ երկարորեան ինչպէս Անիի Ա. Գրիգոր (Ձև 3) — ըլիշէն անուշաղրութեամբ դրուած է յէջ 495, Ձև յին վերեւը — և Ակոռիի եկեղեցեաց մէջ (Ձև 7):

Այդ ձեւը ուշ մտած է Աքբեմտեաց եկեղեցիներուն մէջ, մենց զայն ունինց եօթներորդ դարէն ի վեր. վասն զի Մըբենոյ եկեղեցւոյն հրմարկութիւնը 613-4ին եղած է, Սահառունի Դաւիթ իշխանապետին հրամանով, ինչպէս կը գրէ Յովհաննէս Պատմարանը, և եկեղեցւոյն արձանագրութիւնը կը յայտնէ որ նա շինուած է Հերակլ կայսեր օրով:

Մըբենոյ եկեղեցւոյն ոճին վրայ ձեւուած



Ձև 13. Կաթողիկէ Սթիլի:

Դ. — Ուղղանկիւն նորեն բատ երկարութեան բայց կիսաբոլոր խորշով մը վերջացած, ինչպէս Շիրակաւանի (Ձև 6) և Հոռոմոսի վանքին Շողակաթ եկեղեցեաց մէջ (Ձև 9, — ըլիշէն անուշաղրութեամբ դրուած է յէջ 490, Ձև 3ին վերեւը —):

Ե. — Կան նաեւ քառակուսի երկու կողմանէ անձկացող ինչպէս են Մըբենոյ եկեղեցւոյն կողմանկի եղակ կողակները (տես Շիրակ Հ. Ամելանի էջ 137):

Են նաեւ Անիի կաթողիկէին երկկողման կողակները (Ձև 13) թէ միայն հոս փոխանակ անձկացող աստիճաններով և ուղղագիծ վերջանալու՝ բոլորաձեւ կը վերջանան:

Այս կաթողիկէն շինել տուած է Սմբատ Շահնշահ թագրատունեաց թագաւորը ի դարուն վերջերը Տրդատ ճարտարապետին ձեռքով:

Գայիշանեամց եկեղեցւոյն քառակուսի եր-

կու սրբարանները դիտելու արժանի եզա.  
կանութիւն մ'ունին. ինչպէս ըսինք Աւագ  
կողակին կողմանակից ենած սրբարանները  
թէւ կողակածեւ աշ չըլլան՝ միշտ փողը  
են բան միջին մայր կողակի՛ բնդհակա-  
ռաւին այս եկեղեցւոյն հարաւային և հիւ-  
սիսային սրբարանները հաւասար են մայր  
կողակին իրենց բնդարձակութեամբ:

ԲԱԶՄԱՆՈՂԱԿԱՆ. — Անիի բոլորաձեւ եկե-  
ղեցիները բնդհանրապէս բազմակողակ են,  
ինչպէս վճնեակոյ Salute եկեղեցին. թէեւ  
Հոռոմայ Տ. Տ. Constance հին վկայարանն  
ալ բոլորաձեւ է և բազմակողակ՝ բայց  
անոնք փողը խորշերու երեւոյթը աւնին,  
մինչդեռ Անիի բոլորաձեւ եկեղեցեաց կո-  
ղակները բնդարձակ են իրենց տարածու-  
թեամբ: Անիի Ա. Առաքելոյք խաչածեւ ե-  
կեղեցին (Չե 5) չորս թեւերուն պատին  
թանձրութեան մէջ կողակիներ կը ձեւացնէ,  
Ա. Գրիգորի (Չե 14) ինչպէս Ա. Գէորգ  
վկայարանը, որոնք թ զարուն կանգնուե-  
ցան՝ փեց-վեց կողակներով բոլորչի ձեւը  
կ'առնուն, իսկ Ա. Փրիկից (յԱնի) թէեւ  
Ա. Գրիգորի և Ա. Գևորգի վրայ ձեւուած  
է՝ բայց անոր Աւագ կողակը աւելի բնդ-  
արձակ է և բաց ի անկից գեռ ունի ու-  
րիշ վեց կողակիներ (Չե 10):

### Հ. Մ. Պատահաւան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ԳՐՈՒԱՆՐ ԱՅՆԴԻ ԱՅԱՑԻ ԳՈՐԾԱԿՈՐԻ ՄԸ



Corriere della Seraի մէջ (12 Դեկտ. 1906) կը կարգանք հետեւեալ:

« Եկեղեց Լոռարայի Համալսարանին  
մէջ Տոքթորութեան աստիճան ստացաւ՝ և  
շատ եղական կերպով մը, թէվրս Սա-  
վալու. սա երիտասարդ պաշտօնաւոր  
մ'էր՝ անգիտական ճեպընթաց թղթատա-  
րութեան մատակարարութեան մէջ. իր  
թէզն է 500 էջով գիրք մը՝ տպուած, հա-  
յաստանի երկրարանութեան վրայ, և հե-  
ղինակը ոչ միայն գրած է, այլ նաև

ամրողջապէս ինքիրմէն շարած և տպած:  
Բայց ինչպէս Սավալու շատ տարիներէ ի  
վեր իր ազատ ժամերուն՝ կը զրադէր բու-  
սաբանական և երկրաբանական ուսումնա-  
միրութեամբ, և կը զրադէր նաև թղթ-  
թարանութեամբ. չորհիւ ուսումնափրու-  
թեան՝ դափնեպական ստացաւ համալսարա-  
նին մէջ: Օր մը իւր բարեկամներէն մին գինը  
հրաւիրեց իրեն ընկերելու ուսումնական  
ճամփորդութեան մը ժամանակ գէպ ի Հա-  
յաստան: Սավալու թոյլտուութիւն ստո-  
ցաւ իւր մեծաւորներէն, ընկերեց իր բա-  
րեկամն, և յետոյ մոտածեց շահազործել  
իր զիստողութեանց բաժինը և զործածել  
զանոնք՝ գիտութեան մէջ տողթորութեան  
ասափիճան ստանալու համար: Բայց անգ-  
ղական համալսարաններու մէջ՝ թէզը  
պէտք է տպուած ներկայացուի, և որով-  
հանեւ երեւակայեալ գործը լնդարձակ էր,  
Սավալու զուրկ էր զայն հրատարակելու  
միջոցներէն և միւս կողմանէ ուրիշ ոչ մէկ  
տպագրող յանձն շառաւ զայն հրատարա-  
կել: Այն աստեն որոշեց ինքնիրեն ընեւ:  
Երբ անկլու-սաքսոն վլուփ մը կ'առաջա-  
պէտ նպատակի մ' հասնիլ, աւելի պա-  
տրաստ է կոտրուելու քան զայն թովուու:  
Այսպէս նա զնաց սովորեցաւ ինչ որ հար-  
կաւոր էր զրաշար ըլլալու համար, զնեց  
հարկաւոր եղածը և սկսաւ աշխատախլ՝ պաշ-  
տօնատեղին երթալէն առաջ և իրիկուն՝  
երբ տուն դառնար: Երկայն և ամենատա-  
ժանելի պատութիւն մ' եղաւ, վասնզի  
Սավալու զրաշարութեան մէջ սկսնակ մ' էր  
և մամուլն և զրերը միայն երկու էջի հա-  
մար կը բաւէին, որ պէտք էին շուտով  
ցրուիլ, եթէ կ'ուզէր շարունակել, ով որ  
փորձ է այս բաներու մէջ, կընայ գաղա-  
փար մը կազմել թէ այդ աշխատանքը  
որչափ նեղութիւն կրնայ պատճառած ըլ-  
լաւ: Երեք տարի զրաւ՝ լմանելու համար,  
զերջապէս գեղեցիկ օր մը զիրքը լմացաւ,  
104 օրինակներու տպագրութեամբ: Գոր-  
ծին ամրողջական ծախըն եղաւ 21 սդու-  
մին, 10 շիլին և 10 գէնս, որ է զրե-  
թէ 4 շիլին իւրաքանչիւր հատորի հա-  
մար: